գրատան և այլ գրանշաններ Հիւրմիւզեան Աբբահօր. վերջինս կը գրէ այսպէս. «Ի Բարիզ յաջողեցաւ մեզ խնդիրն զոր արարի վասն անցանելոյ աշակերտաց վարժարանաց մերոց յուսումն բարձրագոյն գիտութեանց ի համալսարանս նոցա՝ առանց նախընթաց ընդհանուր քննութեան. և ի կատարումն գիտութեանն զոր ուսանիցին՝ ընդունել զՏիփլոմ։ Դժուարին էր արդարեւ խնդիրն հակառակ և եղծիչ օրինաց նոցա, և ինքեանք իսկ Գաղղիացիք անհնարին ասէին զոլ զչնորհն. բայց Հազարապետն մեծ Տէրութեանն Լիւի գրեաց առ իս՝ զի զիջաւ Կայսրն առնել Ձեզ զչնորհդ զայդ, և յորժամ Տեսուչ վարժարանին առաջարկեսցէ զոք յաշակերտաց իւրոց՝ ընկալցի վաղվաղակի էքիվալան տիպլոմի Պաշլիէութեան, որպէս տուան պատանւոյն Շաշեանի որդւոյ Թոմասայ եղբօր Մանուէլ Աղայի. այլ զգուշացան տալ հրովարտակ յայտնապէս և հրապարակաւ եղծիչ օրինաց իւրեանց։ Ցաւելին տալ և գիրս բազումս ի տպագրելոցն ի կայսերական տպարանի և այլուր ի հաշիւ. եւս և հրաման տպագրելոյ ի մեր լեզու՝ զերկասիրութիւն Ինքնակալին Նաբոլէոնի, այն ինքն է Վարք Ցուլ. Կեսարու։ Ցետ ելիցն իմոց ի Բարիզէ յաւել Հազարապետն մեծ յղել զերկրորդ աստիճան լեգէոնական պատուանշանի՝ զոր մեր չէր խնդրեալ։ Իսկ Հազարապետն Հասարակաց Կրթութեան ինքնին ետ զպատիւ d'officier տը Սորպոն» (գր. առ Հ. Յովհան. Սորկոռնեան, 1865 Նոյեմբեր 26)։ Վերջիններուս մասին կը գրէ Հ. Հմայեակ, թէ «յանցելում եօթնեկի ընկալաք յանուն Աստուածապատիւ Հօրդ ի Հազարապետէն Հասարակաց Ուսմանց զվկայագիր անուանակոչութեանդ Officier de l'Instruction publique հանդերձ փոքրագիր շքանշաւ, զոր առաքեսցուք պատեհաւ, որպէս զնամակ հազարապետին և զցուցակ մատենիցն շնորհելոց ի նմանէ առ գրատունն վանացս». (գր. առ Հիւրմ. Աբբ, 1865 Հոկտ. 27)։

Հիւրմիւզեան Աբբ. այս երկրորդ անգամն է ուրեմն որ Գաղղիոյ Տէրութենէն կը մեծարուի պատուանշաններով. (առաջին աստիճանը կ'ընդունի 1846-ին, այն է՝ Փարիզու մէջ Մուր. դպրոցի բացման տարին՝ Լուի Ֆիլիբէն)։ Նմանապէս Հ. Հմայեակ Պապիկեան՝ վերջին առթիւ Officier d'Académie կ'անուանուի. (Նմկ. Հ. Հմ. Պապիկեանի առ Հիւրմ. Աբբ. 1865 Սեպտ. 7)։ Իսկ Ցուլիոս Կեսարու պատմութիւնը Հ. Աբրահամ Ճարեանէ գրաբար թարգմանուած՝ լոյս կը տեսնէ 1867-ին Ս. Ղազարու տպարանէն՝ մեծադիր և ամենաշքեղ հրատարակութեամբ։

2. Թուականիս ընթացքին՝ դեռ կը շարունակէ վարժարանը, ապա կը յաջորդէ դադար մեր կրթական գործունէութեան՝ Գաղղիոյ քաղաքական ծանր կացութեան պատճառաւ, ու կը սպասուի բնականոն վիճակի վերադարձին։ Ցետ երկու տարիներու՝ տեսնելով որ ի զուր է սպասել, որով և աւելորդ «յերկարել զփակումն վարժարանին», ուստի ի Ս. Ղազար ժողովական խորհրդակցութեամբ մը կ'որոշուի «յաւելուլ առ այժմ ի Ռափայէլեան վարժարանի աշակերտս յանուն և ծախիւք Մուրատայ». (Ժող. Արձ. Նիստ 1873 Յունուար 4-ի)։ Հարցը քայլ առ քայլ կը դիմէ իր վերջնական լուծման. ամէնքը կը փափագին զէթ այդ ձեւով օր առաջ վերաբացուած տեսնել Մուր. Վարժարանը։ Անոր վերածնունդը այլեւս կը գուշակուի նոյն ինքն Ռափայէլեան Վարժ.ին մէջ։ Հուսկ՝ Վանական ժողովի կը հանուի խնդիրը ու կ'ըլլան գաղափարներու փոխանակութիւններ ու տեսութիւններ, և շատերու տեսակէտը կ'ըլլայ երկու վարժարանները ի մի ձուլել։ Բայց որովհետեւ խնդիրը շատ ծանր ու միանգամայն փափուկ է, լաւագոյն կը համարուի յանձնել Առաջիկայից՝ «առանձինն խորհել և խորհրդակցիլ զպատշաճին և զյարմարութեանց ըստ ամենայն մասանց, և ապա գալ ի վերջնական որոշումն ի յաջորդ ժողովի». (Ժող. Արձ. Նիստ 1873 Յունուար 20-ի)։ Ամբողջ երկու ամիս կ'ուսումնասիրուի հարցը, և հուսկ կ'որոշուի «Լիութեամբ քուէից ձուլել ի մի զերկոսին վարժարանս մեր Ռափայէլ-Մուրատ անուամբ, և յետ տալոյ աշակերտաց զառաջին տարերս ուսմանց և գիտութեանց աստէն ի Վենետիկ, յաւարտ ընթացիցն զբարեկիրթսն և զքաջուշիմս յաշակերտաց առաքել ի Փարիզ ի վարժս համալսարանական ուսմանց և ազատական արուեստից» (Ժող. Արձ. Նիստ 1873 Մարտ 4-ի)։

Ինչպէս կը տեսնենք՝ Փարիզու վարժարանը այլեւս Համալսարանականներու յատուկ չէնք կը նկատուի, և կ'ունենայ մինչեւ 1876՝ այն է անոր վաճառումը՝ իբրեւ վարիչ զՀ. Աբրահամ Ճարեան (1876 Օգոստոս Ընդհ. Ժող. – 1879), Հ. Գրիգոր Ճելալեան եւն.։

Զոյգ վարժարաններու միացման ժամանակ կը սահմանուի նաեւ Մուրատեան մուտքէն տարուէ տարի 20,000 ֆր. անցընել Մուրատ – Ռափայէլեան Վարժարանին՝ սկսեալ 1873 տարիէն. (Անդ)։ Այն գումարին վրայ կ'աւելնայ յետոյ 10,000 ֆրանք եւս, որպէս զի ձրիավարժ աշակերտաց թուոյն վրայ 15 աշակերտներ եւս աւելցուին. (Ժող. Արձ. Նիստ 1875 Մարտի)։